# 922

1. Տե՛ր, Դու ես միայն սերը իմ սրտի,
Չունեմ ուրիշ որևէ մեկն իմ հոգում,
Որ կարողանա տալ մխիթարանք իմ սրտին (2):

Օրհնում եմ Քեզ, Հիսո՛ւս Փրկիչ,
Օրհնում եմ Քեզ, իմ Արարի՛չ,
Օրհնում եմ Քեզ, իմ վե՛մ ու կարեկի՛ց,
Օրհնյա՛լ իմ Տեր, Օրհնյա՛լ Փրկիչ:

2. Քեզ ես կկանչեմ, Քե՛զ, երկնքի Տիրակալ,
Որ սրտիս մեջ թագավոր ես Ամենակալ,
Որ Դու տնկես ինձ Քո այգում հավիտյան (2):

3. Հա՛յր, լսում ես ինձ, ես պիտի գովեմ Քեզ,
Պիտի փառաբանեմ Քո անունը կյանքիս մեջ,
Պիտի խոսեմ ու չլռեմ, սրտանց փառք տամ,
Պիտի երգեմ ու չլռեմ, երգով փառք տամ: